

ալ կ'երթայ կը հասնի մինչեւ զիցաբանական շրջանը եւ հաւանօրէն նոյն է գերակշիռ դիրք վայելող գերմանական դիցուհոյ մը հետ¹: Նման յիշատակութիւններ կան նաեւ Արտեմիսի մասին: Իրեն անբաժին ընկերներն էին յաւերժահարս սերն ու ամազոնները. կը ընակէր աւելի անտառներու եւ ճահճախուտ հովիտներու մէջ կամ կարկաչահոս աղբիւրներու եւ առուակներու քով. ասոնք նաեւ ըստ Վեդայի բնակավայր էին յաւերժահարսներու եւ քաջերու: Արտեմիսի աղդեցութիւնը ամենուրեք էր, դաշտ, պտուղ, կենդանի եւ մարդիկ՝ գլխաւորաբար կիները իրենց ծննդաբերութեան ժամանակ անոր պաշտպանութեան տակ էին: Նշանաւոր էր մանաւանդ իրերւ որսի դիցուհի, որմէ անբաժին էր նաեւ շունը: Իրեն նուիրական անասուններն էին շունը, արջն եւ վարազը, անոր համար ալ վարազի կերպարների տակ կը սպաննէ Աղոնիս, զոր սակայն կը յարուցանէ միանդամայն: Ահա այսպիսի եղած ըլլալու է նաեւ մեր յաւերժահարսներու մայր Աստղիկը, որոն պատերազմի տեսագծերով այրական նկարագիր ունենալուն՝ վկայ է նաեւ Տարօնի մէջ յիշուած Աստղը երդը², ինչպէս նաեւ Սրուանձտեանցի դիցուհոյս մասին հաղորդած զըսցը, որոն համաձայն Արածանւոյ գուռու գուռույ, ըսուած տեղը տակաւին Աստղիկի լոգարան կը կոչուի եղեր: «Եւ քանզի գիշերները լուացուելու սովորութիւն ունէր Աստղիկը, Դաշոնաց սարին վրայ մեծ կրակ կը վառէին տարփաւոր կտրիձները, որոյ լուսով կը գիտէին Աստղիկի չքնաղ գեղեկցութիւնը, հնարած է Աստղիկը, որ մշուշ պատէայն ամբողջ միջավայրը³, իբր պատիժ երիտասարդներու հետաքրքրութեան:

(Շաբաթ-կոմիտէտ)

ԴՊԿ. Հ. Ա. ՄԱՏԻԿԱՅՆ



¹ Դասական մատենագրութիւնը գերմանական Waldfrau համապատասխան գեղեցիկ բառ մը աւանդած է մեզի՝ Տայրէլին, Տայրէլանցոյ, որ տպագիր օրինակին մէջ աղաւազուած եղած է Տայրէլան. ² Զդիթնիսիս ատեն թէ այդեաց շահապետ է եւ զլթենան: Թէ ձիթենեաց եւ զլայթենուն ամենայն ծառոց շահապետ կոչեն, Ուկեր. Մեկն. Ես., էջ 274. այս եզդ բառը Վարդանեան կը սրբագրէ իրաւամբ վրայի տակայաց, բառաբնական գիտողութիւններ գր. էջ 86-87:

² Ալիշան, զին հաւատք 301:³ Գրոց բրոց, էջ 97-98:

Ց Ե Ղ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Բ Ն Ո Ւ Թ Ե Ե Ն Ս Ի Ե Ր Ո Ւ Մ Ը Ն Դ Ի Ւ Վ Ա Վ Ո Ւ Խ Ո Ւ Խ
Յ Ա Ց Կ Ա Պ Լ Ս Հ Ե Ց Ա Ս Տ Ա Ռ Ե Ն Ո Ւ Խ

(Տևառություն Անտառների ոչնչացման առթիւ:)

— (Շաբաթ-կոմիտէտ)

Բ.

Անսառների վասնգմանն աեսակէալց հրեշտառ գէր կատարեց Անդրկովկասում՝ մի անհրաժեշտ օրէնքի անիմաստ գործադրութիւնը: 1900 թ. կառավարութիւնը ցանկանալով վերջ դնել գիւղական համայնքների մէջ տեղի ունեցող բազմաթիւ եւ անվերջ վէճերին, որոշեց հաստատել իւրաքանչիւր համայնքի վերայ այն հողային տարածութիւնը, որը նա անխափան տիրապետել է մինչ այդ օրէնքի հրատարակութիւնը: Դիւղացիական գործերը վարող տեսեանի (Գуберնսկու ու ուստանու դժուական պատողութեան առարկայ կարող էին լինել միայն բանագույն մերժութիւնները:

Կովկասեան Փոխարքան եւ Հողագործութեան նախարարի լիազօրը, ղեկավարուելով արքունական գանձարանի եկամուտի տեսակէտով եւ մասամբ գիւղական համայնքների հողային կարիքը աչքի առաջ ունենալով, որոշեցին՝ անտառապետութիւնների այն մասերը, ուր անտառները ջնջուած էին, բայց մնում էին հետքեր, արմատներ (թէկուզ գեռ կանանչ) եւ թփեր, նմանապէս այն մասերը, որոնք նուազած եւ նորացած էին, որոնց մէջ սակայն գեռ կային զանազան մեծութեան անտառապետներին, — կցել հարեւան գիւղերի հողագործիններին, — մի նուեր, որ կատարելապէս գանցաւ եւ դարձաւ: Եւ զիւղերը ուրախութեամբ զիմանքորեցին պետութեան այդ վերաբերմունքը: Մի գիտակից ազգաբնակութեան ձեռքերում

սա կտրող էր լինել միայն բարիք։ Խնամքի տակ առնելով այդ նոր հողարաժինները, կանոնաւոր շահագործելով հասած ծառերը, ոչնչացումից պաշտպանելով մատաղ շիւերը եւ կանաչ արմանները, որոշ ժամանակամիջոցում անտառը ի հարկէ կը վերանորոգուէր եւ շատ համայնքներ ապահովուած կը լինէին սեփական անտառով, եւ որ ամենազլաւորն է, կը մնար եւ կը զօրանար՝ երկիրը աւերմունքից իրեւել զրահով պաշտպանող զօտին։ Անդրկովկասում այսպիսի զբութեան կատարեալ հակապատկերը իրագործուեց։ Դիւզացինները լաւագոյն գործի արժանի եռամնով սկսեցին ոչնչացնել իրենց յանձնուած անտառաբաժինները ու անտառային ֆնացորդները, քանդելով եւ արմասները, միաժամանակ արձակելով այդ տարածութիւնների վերայ իրենց հօտերը։ Այն ինչ կատարում էր զաղտագողի, եւ այդ պատճառով շարունակում էր երկարի համայնքները շրջապատող ատառների հոգեվարը, կատարուեց կարծ ժամանակամիջոցում։ Բնականաբար եւ դրա հետեւանքը չուշացաւ։ Դիւզերի հողացին այդ նոր «նուածումները» արագ մերկանալով, հետեւաբար եւ աւերուելով, իրենց հետը քարշեցին եւ շարունակում են քարշել զգալի տարածութիւններ հին կուլտուրական հողարաժինների, ծածկելով վերջինները իրենց բեկորների տակ։

Անտառը Անդրկովկասում պաշարուած է եւ վերեւից եւ ներքեւից։ Ինչ պէս ասացինք՝ անտառը, ուր նա մնացած է, քշուած է լեռան կողերը։ Ներքեւից նրան ոչնչացնում է ստորոտում դանուող զիւղացիութիւնը, որ ոչ միայն կտրելով, այլ եւ արձակելով հօտերը անտառի ներս՝ ոչնչացնում է մատաղ ծառատունքերը, որով վտանգուում է նրա վերանորոգութեան հնարաւորութիւնը։ Վերեւից նոյն աւերիչ գերը կատարում են խաշնարած ցեղերը, որոնք անտառը հաստատում են լեռների ալպեան բաժնում, անտառների եղերներին։

Նրանք սակայն վետառում են անտառը ոչ այնքան ծառեր կտրելով, որովհետեւ վերցնում են միայն վառելափայտ, որքան իրենց հօտերով վշացնելով ջահիլ ծառատունքերը եւ նոր ծիլերը։ Սակայն ժամանակի ընթացքում սրանցից մի մասը բցին է զրել անտառների մէջ, ուր ձմերում են։ Երկու կողմերն եւ երաշտ տարիներում անտառների կերի պակասութեան գէպքերում մի սոսկալի աւերիչ միջոց են գործածում, կտրում են ծառերը, երբեմն հսկաներ, նրանց դաշտը Ճիւղերով անտառները կերակրելու համար։ Այդ ձեւով լուրջ քանակութեամբ կեր կարելի է ստանալ ի հարկէ միայն մեծքանակութեամբ ծառեր կտրելով։

Ազգաբնակութեան կործանաբար վերաբերմունքը գէպի սեփական երկրի բնութիւնը ընդհանուր է Անդրկովկասում, բայց նրա ոչ մի մասում դրա հետեւանքը այնպիսի ահոելի տեսարան չի տուել, ինչ պէս կենդրոնական Հայաստանում, որը ի բնէ հարուստ չէր անտառներով։ Հովհանները այստեղ շրջապատուած են ըստ մեծի մասին այսպէս ասած մեռեալ լեռներով, շատերը վաղուց այդ վիճակին հասած, միւնները նոր ժամանակներում։ Սոսկալի է տպաւորութիւնը, երբ մարդ կանաչազարդ վրաստանից յետոյ մտնում է մեր երկիրը։ Այս տեղ անտառային բուսականութիւնը առանձին խնամքի առարկայ պիտի լինէր թէ կառավարութեան եւ թէ ժողովրդի կողմից։ Ժողովրդին բացակայում էր զիտակցութիւնը, իսկ բիւրոկրատիք իշխանութիւնը ձեւականորէն էր վերաբերուում գէպի իւր պարտականութիւնները, աչք փակելով արհաւիրքի բնաւորութեան եւ չափերի վերայ։ Զեւական եւ մակերեւոյթային վերաբերմունքը հացըց այն աստիճանի, որ հերթական անտառահասութեան օրէնքը տարածեց եւ այս նահանգի անտառապետութիւնների վերայ, որոնք բոլորը, բացի Ղարաքիլիսի

անտառապետութիւնը, վաղուց՝ երկարժամանակի ընթացքում հասունացած ծոռերի վերաբերմամբ արդէն ծառաքաղ էին եղած ժողովրդի կողմից, մասածը մատաղ բուսականութիւն էր, որը պէտք էր խնամել եւ թողել որ աճի: Կտրած ծառատունկերը տուկ միայն վառելքի կարող էին ծառայել: Բայց վառել այդպիսի անտառասակաւ երկրում այդ հասակի ծառատունկեր, մանաւանդ որ ընդհանրապէս փայտը չէ կազմում վառելքը այս նահանգի, միեւնոյն է թէ վառել սեփական տունը: Այն ժամանակ, երբ չորս կողմից պաշարուած ջնջւում էր անտառը, հօտերը խուժում էին նրա ներար եւ ոչնչացնում էին նոր շիւերը եւ ծիղմ տունկերը, այս անտառապետութիւնների մէջ եւս հաստատուեց “կանոնաւոր շահագործման կարգը”: Անտառները բաժանում էին մէկը միւսին հետեւող մասերի հերթով տարից տարի կտրուելու համար, այն հաշուով, որ մինչեւ հերթը համեր վերջին մասին, առաջինը արդէն վերանորոգուած կը լինի: Խւրաքանչիւր տարի նշանակուած բաժինը տրում էր աճուրդով, եւ ենթարկուում էր համաձարակ ծառահատման: Սորանով միայն այն եղաւ, որ վաղուց արդէն ուժասպառ եղած մատաղատունկ անտառների համար ժողովրդական կացնին աւելացաւ պետական կացինը: Նրանք գեռ պիտի աճէին, բայց կտրում էին վերանորոգուելու յուսով: Թէ ինչպիսի պայմաններ կային անտառների վերանորոգուելու համար, մենք մի քանի անդամ շօշափեցինք: Անտառի այդ ձեւի շահագործութիւնը (համաձարակ ծառահատութիւն) միտք ունի միայն հետեւեալ գէպերում, առաջին՝ երբ անտառը հասունացած է, երկրորդ՝ որ ամենազիւսորն է, երբ նա ապահովուած է ոչնչացման վտանգներից:

Պարզ է, որ անտառների պահպանութեան վերաբերեալ օրէնքները եւ շահագործման ձեւերը աննպատակայարմար էին:

Իրերի դրութիւնը պահանջում էր բացառիկ միջոցներ, բացառիկ խնամք պետութեան կողմից՝ փրկելու սպառնացող վերջնական ոչնչացումից երկրի կարեւորագոյն, միաժամանակ նրա բնութիւնը աւերումից պաշապանող բնական հարստութիւնը, որը անսպառ է կանոնաւոր շահագործման դէպքում: Բայց ուռւսական բիւրոկրատիան այս խնդրում եւս գիմաւորում էր աղաղակող պետական պահանջն մահացու գանդաղիտառութեամբ, մինչեւ որ չարիքը կը դառնար անուղելի իրողութիւն, — հակառակ իւր հիմնադրի Պետրոս ՄԵծի սկզբունքին, որ պետական գործերում գանգաղութիւնը մահուան է հաւասար: Չի կարելի չնկատել, որ երկրի բնութեան գէմ կատարուող արհաւիրքի մասին թոյլ էր գիտակցութիւնը նաեւ մտաւորականների մեծ խաւերում: Խակ մասմուլում երբեմնակի էին միայն տեղի ունենում յիշատակութիւններ այս մասին մի որեւից տուր գէպքի ապաւորութեան տակ: Հայրենագիտութիւնը եւ երկրագիտութիւնը առ հասարակ խոչը տեղ չէին բռնում Անդրկովկասի գիտակից տարրի մտաւոր պաշարի մէջ: Մի հաստատութիւն որ շօշափում էր մերթ ընդ մերթ եւ ուշագրութեան առարկայ էր գարձնում անտառների ոչնչացման վասնգը եւ դրա հետեւանկըները, դա Կովկասեան կայսերական գիւղատնուական Ընկերութիւնն էր: Սակայն նա եւս չէր զբաղւում այդ խնդրով համաձայն վերջինիս կարեւորութեան ու մեծութեան ըստ երեւոյթին չէր գիտակցում երկրի վտանգման ծաւալը եւ աստիճանը, որքան այդ պէտք էր ապասել նրանից ըստ նրա անդամների կազմի որակի եւ իւր կոչմանը ամբողջ Կովկասում: Որովհետեւ հակառակ գէպքում այս հարցը առաջին տեղը պիտի բռնէր նրա գործունէութեան մէջ, մի գործունէութիւն, որը նուիրուած էր երկրի գիւղատնուասութեան ուսումնասիրութեան եւ նրա բարելաւման:

Պատահում էին եւ պետական համապատասխան վարչութեան մէջ հեղեղակաւոր անձնաւորութիւններ, որոնք սաստիկ մտահոգ էին երկիրը աւերող արհաւիրքի հանդէպ, ինչպէս օրինակ Հողագործութեան նախարարի կովկասի լիազօրի օգնական հանդուցեալ վասիլեւը։ Ահազանդ էր նրա եզրակացութիւնը. «Անդրիովկասում լեռների արեւելեան կողերի վերայ ոչնչացուղ անտառները այլ եւս անվերանորոգելի են՝ զուտ կիմայական պատճառուներով. ինչ որ կարողացել էր ստեղծել բնութիւնը դարերի ընթացքում՝ այդ մասերում, անիրազործելի է մարդու համար»։

Այս հարցին խոր եւ լայն թափանցողի համար պարզում է մի սոսկալի իրողութիւն, թէ երկրակործան չարիքը ճակատադրական եւ անողոքելի բնոյթ է ստացել։ Սակայն պիտի հաշտուել դրահետ։ Ինչ որ հանդուրժելի էր բիւրոկարախցի տիրապետութեան ժամանակ, կարելի է հանդուրժել համարել այժմ։

Գ.

Վաղուց ի վեր ուշադրութեան առարկայ դարձրած անտառների պաշտպանութեան չարաբաստիկ վեճակը եւ զրանից մեր երկրին չետեւող վնասը եւ վտանգը, ի թիւս մեր պարտականութիւնների երկրի հանդէպ՝ մեր պատգամաւորութեան շնուրում այս ինդրին մեր բնականաբար տուած էինք իր պատշաճաւոր տեղը։

1910 թուին Պետական Դռւմայում չողագործական նախարարութեան անտառային բաժնի բիւրջէի քննութեան ժամանակ տալով Անդրիովկասի անտառների ոչնչացման մանրամասն նկարագիրը եւ դրահաւարոր չետեւանքները, յաջողուեց կայացնել տալ միաձայն որոշում, որով առաջարկում էր չողագործային նախարարութեան անհապաղ միջոցներ ձեռք առնուլ Անդրիովկասի անտառների պաշտպանու-

թեան համար եւ ձեռնարկել անտառաբուծութիւն երկրի անտառագույրկ շրջաններում։ Մի. Տանրակշեռ խնդիր։ Որովհետեւ Հողագործային նախարարութիւնը որոշ սկզբունքներով ղեկավարուելով, ժամանակի ընթացքում ստեղծել էր անտառային վարչութիւն եւ կազմակերպուած անտառապետութիւններ մասնագէտ անտառապետների հսկողութեան ներքյ, նակարող էր խստացնել հսկողութիւնը։ Սակայն պարզ էր, որ դա չէր լուծելու հարցը։ Նրա ստեղծած՝ անտառներին վերաբերեալ վարչական մեքենան չէր տալիս Անդրիովկասում սպասած արդիւնքը։ Այդ մեքենան ուշացնում էր միայն անտառների ոչնչացումը, բայց անկարող էր առաջ բերել հաւասարակշռութիւն անտառների բնական աճման եւ տեղի ունեցող շահագործման մէջ։ Տարից տարի հաշուեկշուը տալիս էր մինուս եւ հիմնական պաշարը անընդհատ ընթանում էր դէպի զէրօ, որ շատ տարածութիւնների համար արդէն կատարուած իրողութիւն է։ Կը նշանակի անհրաժեշտ էր այս երկրում անտառային վարչութեան եւ անտառապահութեան հիմնական վերանորոգում, որը անխուսափելու կը պահանջնէր նոր խոշոր զոհորութիւններ պետական զանձարանից։ Հետեւաբար անհրաժեշտ էր հարցը վառ պահել Պետական Դռւմայում, մինչեւ որ իրագործուէր։ Խակ մեր պատգամաւորութիւնից յետոյ, չետեւեալ տարիներում, մինչեւ յեղափոխութեան բոնկումը, Անդրիովկասի վերաբերեալ այս կենսական հարցին այլ եւս չետեւող չեղաւ Պետական Դռւմայում։

Պետական Դռւմայի միջամտութեան արդիւնքը այն եղաւ, որ իրօք լարուեց վարչութեան ուշադրութիւնը, որոշ չափով ուժեղացաւ հսկողութիւնը։ Բայց ինչպէս ասացինք եղած վարչական մեքենայի ոչ մի լարումը անկարող էր փրկել զրութիւնը։ Սոյն տարին ամսունային արձա-

կուրդներին երկրին գրութիւնը այս կողմից տեղն ու տեղը ստուգելու համար, թիվ-լիզե, Դանձակի եւ Երեւանեան նահանգներում մեր կատարած շրջազայռութեան ժամանակ, որի մասին վերը յիշեցինք, թէ պետական կալուածների վարչութիւնների պետերից, թէ նահանգական անտառային վերաբնիշներից եւ թէ անտառապետներից լսում էինք մի եւ նոյն չարագուշակ եղակացութիւնը, թէ տիրող ձեւերով, եղած միջոցներով՝ անտառները ոչնչացումց փրկել անհնարին է, թէ ազգաբնակութիւնը կանխում է հսկողութիւնը, թէ վարչութիւնը կարողանում է միայն թուլացնել ոչնչացման թափը, հակառակ դէպքում՝ մի քանի տարիների ընթացքում շատ անտառների հետքերը նոյն իսկ կտրելի չէր լինիլ գտնել: Իսկ ազգաբնակութեան մէջ նոյն խնդիրը շօշափելիս, միայն համոզում էինք, որ չարիքը իրօք ճակատագրական բնոյթ է կրում: Նոյն իսկ բանիմացներից լսում էինք. “անկարելի է, որ ժողովուրդը խնայի անտառին. իւրաքանչչերը մտածում է եթէ ես ըստ կտրեմ, ուրիշը պիտի կտրի”:

Դարաւոր խաւարը, որի մէջ ցարական իշխանութիւնը գիտակցաբար պահում էր ժողովուրդը, համոզուած հոմեօպատ լինելով նրա լուսաւորութեան գործում, — այդ խաւարը այնպիսի մի խոչնդում է, որ պետական առաջնակարգ եւ յետաձգում չհանդուրժող խնդիրները սովորական եղանակով, սովորական միջոցներով լուծել անհնարին է:

Երկիրը կառավարող իշխանութիւնները սկսած նահանգապետներից այս խընդուվ չէին վրագլում, համարելով, որ դա չի վերաբերում իրենց վարչութեան, այլ Պետական կալուածների նախարարութեան եւ նրա ենթակայ անտառային վարչութեան: Կոչուած լինելով կառավարելու, նրանք չէին ել տեսնում, թէ ինչպէս տարից տարի երկիրը մերկանում է եւ ա-

ւերուում եւ բազմաթիւ շրջաններում փայտի սովէ է տիրում, որը գնապով ընդարձակում է իւր ծաւալը: Նրաք վրագլում էին միայն չարիքի հետեւանքներով, արձանագրելով հեղեղների կատարած աւերմունքները եւ ազգաբնակութեան հասած վնասները՝ առանց մի որեւէ մտահոգութեան պատճառների մասին, լինելով ընդհանրապէս անձեռնարկ եւ ստեղծագործական ոգուց զորկ, ինչպէս ծշարէն նկատել էր Ֆէյմն Բրայսը ուռւսական պաշտօնէութեան այդ մահացու զիծը իւր ճանապարհորդութեան ժամանակ Անդրկովկասում: Երբեմն միջոցներ էին ձեռք առնում, երբ հեղեղները չափազանց վտանգաւոր կերպարանք էին ստանում. հարկադրում եւ զեկավարում էին հասարակութիւնները նրանց ընթացքը փոխելու աւելի անվասուղութեամբ: Հետաքրքիր է նկատել, որ համայնքները ինքնաբերաբար այդ եւս չէին անում:

1914 թ. Կովկասեան փոխարքայութեան առաջիկայ եռամեակի վեմափյական (ներքին, երկրային) բիւդիչն քննելու ժամանակ, որով զբաղուած խորհուրդը այս անգամ ըստ նոր օրէնքի՝ բաղկացած էր բացի նահանգապետներից եւ մի մի ներկայացուցչից իւրաքանչիւր նահանգից, երբ մէնք առաջարկեցինք զեմստվյական գործունէութեան աւելացնել նոր յօդուած — երկրի բնութեան պաշտպանութիւնը, այդ առաջարկութիւնը անակնկալի տպաւորութիւն գործեց: Միայն երկար բացարութիւններից յետոյ, — որ մի խորհուրդ, որը բացի ժողովրդական կրթութեան եւ հաղորդակցութեան գործերից զբաղում է եւ զիւզասնաեսութեան բարելաւման վերաբերեալ ձեռնարկներով, չի կարող անտարբեր մնալ, թէ ինչպէս անդարձ ոչընչանում է երկրի մի խոշոր հարատութիւն եւ ինչպէս միաժամանակ գորա հետեւանօք աւերում է մայր երկիրը եւ որ ուրիշ ոչ մի դէպքում աւելի իրաւամբ չի կարելի

յայտարարել, որ հայրենիքը վտանգի մէջ է, խորհուրդը համաձայնութեց ընդունել այս յօդուածը, սակայն շատ համեստ սահմաններով. որոշեց կաղմել յատուկ յանձնաժողով, յանձնարարելով նրան ուսումնասիրել երկրի վեճակը վերսիշեալ տեսակէտից եւ ծրագիր ներկայացնել զեմստվյի կողմից ձեռնարկելիք միջոցների մասին. ի թիւս որոց ի հարկէ պիտի շշափուէր եւ անտառների վերանորոգման հարցը:

Այդ փնտումները երեք տարուց յետոյ միայն կարող էին զեմստվյի քննութեան առարկայ դառնալ, հետեւեալ եռամեակի բիւդջէն նայելիս: Ուրեմն դեռ պիտի պարզուէր, ինչ որ ակներեւ էր, ապա երեք տարուց յետոյ քննուէին ձեռնարկելիք միջոցները: Երանի թէ մեր երկրի բնութեան աւերումն էլ այդպիսի հանդարտ քայլով առաջ ընթանար: Շուտով վրահամնող աշխարհաւեր պատերազմը շփոթեց ամէն բան: Կոմիսարան փոխարքայութեան զեմստվյական ձիւղի շատ ուրջ ձեռնարկները մնացին անկատար, ի թիւս դոցա եւ այս ծրագիրը:

Դ.

Մի երկրում, ուր իրերի պլութիւնը այն վեճակի մէջ է, որ ապանում է նյյն իսկ բնութեան ստեղծագործական պյուր, — անտառների վերանորոգման հնարաւորութիւնը, ակներեւ է որ անտառաբուծութիւնը կարող զոյսութիւն ունենալ: Պետական մասշտաբով Անդրկոմիկասում անտառաբուծութեան փորձ չի եղել: Այս տեղ անապատն է, որ շարունակ նոր նուածումներ է գործում, ոչ թէ մարդը ի հաշիւ անապատի: Եւ ի՞նչպէս կարող էր նյյն վարչութիւնը այդպիսի ձեռնարկով ու գեւորուել, երբ եղածը անկարող էր փրկել:

¹ Անտառապյին վարչութեան մէջ պատահում էին անհատներ, որոնք երբեմն ծառաբուծութեան

Անտառաբուծութիւնը հեշտ գործ չէ: ինչ որ կատարւում է նւրովայում, չի նշանակիլ, թէ հեշտ մատչելի է եւ մեզ համար: Փրանսիան վերջին մի քանի տասնեակ տարիներում այդ ուղղութեամբ ուղղակի հրաշքներ դորձեց: Փրանսիական ալպարքը խաւար ժամանակներում նոյնպէս մերկացել էին անտառային բուսականութիւնից, առաջ բերելով աւերման նոյն տեսարանները: Կառավարութիւնը ձեռնարկեց հիմնական եւ սիստեմատիք անտառաբուծութիւն այդ լերկ եւ ողղուած լեռնամասե-

հետաքրքրական փորձեր էին անում: Այդ տեսակէտից յիշատակութեան արժանի է երեւանեան եւ Կարսի նահանգների պետական կարուածների կառավարչի հանգուցեալ Արդասենովի կատարած ները Գարաշչագ աւանում: Նա երկու պրոբլեմներ լուծեց, որոնցից մէկը կարող է իւր նշանակութիւնը ունենալ անտառաբուծութիւն սկսելու դէպքում: Յատուկ տնկարանում նա կարողացաւ աճեցնել այսեղ՝ եղենաւոր ծառերի տեսակներ, որոնք բացակայում են Երեւանեան նահանգի անտառներում: Սակայն պիտի աշքի առաջ ունենալ այն, որ այդ տնկարանը ջրում է, մի բան, որ անհնարին է Եռանալանջերին, անտառների վերանորոգութեան գէկպուտ:

Գործնական տեսակէտից աւելի կարեւոր էր երկրորդ պրոբլեմը որը յաջողութեամբ լուծեց, — պտղատու ծառերի վերաբերմամբ: — Արդասենովը առաջինն էր, որ ապացուցեց, որ Հայկական բարձրաւանդակում, միջին թուռով 6000 կանգուն (Փուտ) ծովից բարձր տարածութեան վերայ, կառելի է աճեցնել պտղատու ծառեր: Մենք առիթ ունեցանք տեսնելու նոյն Գարաշչագում նորա տնկած պետական այգում արդէն հասած առաջնակարգ տեսակի ֆրանսիական կեռաւ՝ Յուլիսի վերջերին: Արդասենովի նպատակն էր տարածել բարձրաւանդակի աղդաբնակութեան մէջ պտղատու ծառերի եւ պտղատու թփերի մշակութիւնը: Այն գիւղացիները, որոնք կարող էին ապացուցանել, թէ ունին ցանկապատած ջրարբի գետին, կարողէին նրա տնկարանից ստանալ կեռասի, խնձորի, բալի, սալորի պատուաստուած տունկեր եւ մշակուած պտղատու թփեր, մօրի եւն:

Գժբաղտաբար արդինք չէր նկատում: Հայկական բարձրաւանդակի աղդաբնակութիւնը սէր չունի գէպի ծառաբուծութիւն: Այդ բարձրաւանդակի մերկ եւ մոայլատես գիւղերում, որոնց ճարտարապետութիւնը կրում է գեռ Քսենոփոնի նկարագրութեան կնիքը, երբեմն կարելի է պատահել միայն սակաւաթիւ ուռենիների, որ մի փոքր մեղմացնում են ընդհանրապէս ճնշող տեսարանը:

լում, կանգ չառնելով ոչ մի գժուարութեան եւ ոչ մի ծախսի առաջ։ Հեռան այնպիսի մասերում, ուր հողաշերտի կատարեալ բացակայութեան պատճառաւ ծառատունկ հաստատել անհնարին էր լինում, նոյն իսկ այդ տեսակ տեղերը կենդանացնում էին, չիմերով (մարգագետնից կը տրուած շերտեր) ծածկելով։ Երբեմն մերկ Փրանսիական ալպերը այժմ զգալի տարածութեամբ ծածկուած են մատաղատունկ անտառներով եւ նրանցում արդէն վազուց լուել են հեղեղները։ Դործը դեռ շարունակում է։ Այդ հսկայական ձեռնարկութիւնը իւր բոլոր բարդութիւններով եւ առաջ եկած արդիւնքը նկարազրուած է յայտնի մասնագէտ Դեմնցիէի գեղեցիկ շարադրութեան մէջ, որը նախապէս տալիս է բնութեան աւերման պրոցեսի գիտական նկարագիրը (որը առաջ է գալիս անտառների ոչնչացման հետեւանօք) նրա (աւերման) ձեւերը, աստիճանները եւ զարգացումը։ Դժբախտաբար մենք առ այժմ կարող ենք օգտուել Դեմնցիէի շարադրութեան առաջին մասից, իբրեւ ահազանդ յուշարարից, որովհետեւ անտառաբուծութիւն Անդրկովկասում լուրջ ծաւալով դեռ երկար ժամանակ մօտաւորապէս երազային ձգտում պիտի համարել, մի սոսկալի ճշմարտութիւն, որը գնալով աւելի է պարզում մեզ համար։

(Շահագործութեան)

Յ. ՍԱՂԱԹԵԼԵԱՆ



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՈՅՈՒԿԵՆ ՀԱՅԵՐԻՆԻ ՅԱՏԿՈՒԹԻՒՆ-
ՆԵՐԻՆ

Բ.

Կրկնանուն ածականներ։

Կախորդ յօդու ածին մէջ ուսումնասիրուած ածականները առանց բացառութեան արմատ գյականներ ունէին իրենց առընթեր, զրութ առանց վերջադիր մասնիկներով ածանցել փորձելու անփոփոխ ու անայլայլ կը կցէին պարզաբար իրենց վերջը։ Այսպէս — անտեսուած քանի մը նոր օրինակներ ալ յաճախելու համար — “պատուած ունին”, Զգոն, էջ 266, 276 եւ 307 = ոչ լ, ոչ, populus qui non est populus, “առաջնակարծ բործ + (մեղուի),, Բարս., Վեց., էջ 165 = τῆς μελίσσης τὸ ἀδιότροπον, “պատուած ունին”, Աւրէնք, Գ, 5 = πλήν τῶν πόλεων, “բարեբար բործ”, Կիւր., Կոչ. Ընծ., էջ 4 = τὴν ἀγαθὴν προαιρεσίν, “Էւրբաւուր էւրուն”, Եւագր., էջ 110 = τραχύτεια, որուն իրեւեւ տարբերակ ունի մատենագրանիսթ. 235 Զեռ. “Խոշր կորտ, , թղ. 26 ա, “Անձեւածուր շարտ, , Բ. Մակար. ԺԱ, 2 = τὴν լուսոն պասառ, “Տարւագիր էւրուն”, Կիւր., Կոչ. Ընծ., էջ 70 իսτεριχῶν βιթլիան, “Նանցիր էւրուն”, Եւսեբ., Եկ. Պատմ., էջ 464, որուն ասորին կը պակսի այստեղ, “Հրաման ման,, Զգոն, էջ 299, ասորին միայն “ման,, (Graf-fini, Pat. syr. I, էջ 833), “Հանդակագործ բործ, , Եւգր., ԼԲ, 4 = ἔργῳ δικτυωτῷ եւ այլն”

Այս ձեւը սակայն անհրաժեշտ ու միակ օրէնք չէ գասական մատենագրիներու քով։ Կան դէպքեր, ուր արմատ գոյականները առն, -իւն, -էն, -ուն, -ունիւն, -ունին, -ունուն եւ այլն վերջադիր մասնիկներով կ'ածանցուին անարդել, օրինակ՝ “պարծուն, , “տեսէլ, , “կարծիւն, , “յաւդուն, , “գիտունիւն, , “ծագուն, , “ծնունդ, , եւ այլն, մինչդեռ ածականները հաստատուն կը պահեն իրենց ծայրը ածանցման ենթարկուած գյականներուն արմատները՝ պարծուն, -ուն, -իւն, -ունուն, -իւն, -ունիւն, -ունին, -ունինիւն, -ունինին, -ունինուն, կան գարձեալ դէպքեր ու տեղեր, թէպէտ շատ ցանցառ, ուր գյականները կը ներկայանան միշտ արմատ